

1.3. ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

Լեռնային Գարաբաղի Հանրապետության սպառողական շուկայում 2012թ. դեկտեմբերին ինչպես և հաշվետու տարվա ութ ամիսներին 2011թ. դեկտեմբերի նկատմամբ արձանագրվել է գնաճ: Սպառողական գների ընդհանուր մակարդակի փոփոխությունը պայմանավորված է համաշխարհային շուկայում զարգացումների, պարենային որոշ ապրանքատեսակների գնաճի, առանձին պարենային ապրանքատեսակների սեզոնայնության, սպառման կառուցվածքի, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխությամբ:

Գների և սակագների փոփոխություններն, ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների 2012թ. հունվար-դեկտեմբերին

2012թ.	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Սղաճը		Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս ³⁾	Արտահանման միջին գների (միջին արժեքի) ինդեքս ⁴⁾	Ներմուծման միջին գների (միջին արժեքի) ինդեքս ⁴⁾
		2011թ. դեկտեմբերի նկատմամբ	2010թ. նկատմամբ				
Հունվար	102.0	102.0	116.4	101.1	107.0	95.4	105.1
Փետրվար	99.7	101.7	116.1	100.3	100.8	103.1	101.6
Մարտ	100.5	102.2	116.7	109.0	99.5	108.9	100.5
Ապրիլ	99.6	101.8	116.3	96.1	96.4	89.0	98.2
Մայիս	99.7	101.5	115.9	104.1	98.3	99.5	104.8
Հունիս	99.2	100.8	115.1	90.9	98.0	102.0 [#]	95.8
Հուլիս	99.0	99.8	114.0	109.6	99.1	102.5	101.5
Օգոստոս	99.5	99.3	113.4	74.9	102.1	101.8	99.9
Սեպտեմբեր	100.3	99.6	113.8	116.9	96.1	99.2	99.4
Հոկտեմբեր	100.7	100.3	114.5	120.7	108.3	98.7	100.8
Նոյեմբեր	101.1	101.4	115.7	91.9	107.2	102.7	102.1
Դեկտեմբեր	101.6	103.0	117.6	102.0	106.9	94.3	100.7
2012թ. հունվար-դեկտեմբերը 2011թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ	102.0	-	-	88.5	100.5	98.3	108.6

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության՝ ԼՂՀ-ում գների դիտարկումը կատարվում է յուրաքանչյուր ամսվա 1-ին, 10-ին և 20-ին մոտ ընկած ժամանակահատվածում, հանրապետության 7 բնակավայրերում՝ 411 անվանում ապրանք (ծառայություն)-ների կայացուցիչների գծով:


²⁾ Գների դիտարկումը կատարվում է 40 արդյունաբերական բազային ձեռնարկություններում՝ 41 անվանում արտադրանք-ների կայացուցիչների գծով:

³⁾ Ըստ գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված 34 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁴⁾ Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների:

Գների, սակագների աճի տեմպերը 2011-2012թթ. հունվար-դեկտեմբերին

(նախորդ տարվա հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %)




ԼՂՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2012թ. հունվար-դեկտեմբերին

	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
(%)												
<i>Սպառողական գների ինդեքս</i>												
2011թ. դեկտեմբերի նկատմամբ	102.0	101.7	102.2	101.8	101.5	100.8	99.8	99.3	99.6	100.3	101.4	103.0
նախորդ ամսվա նկատմամբ	102.0	99.7	100.5	99.6	99.7	99.2	99.0	99.5	100.3	100.7	101.1	101.6
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ	103.5	102.1	101.5	100.3	100.1	101.1	102.2	101.7	102.4	103.3	103.2	103.0
<i>ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը</i>												
2011թ. դեկտեմբերի նկատմամբ	101.2	101.4	101.6	102.3	103.9	108.2	108.2	107.2	106.7	106.1	106.3	105.9
նախորդ ամսվա նկատմամբ	101.2	100.3	100.1	100.7	101.5	104.2	100.0	99.1	99.5	99.5	100.1	99.7
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ	106.2	106.5	105.6	104.9	106.3	110.6	113.0	111.9	109.8	108.0	106.4	105.9
<i>Եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը</i>												
2011թ. դեկտեմբերի նկատմամբ	99.1	101.9	101.8	102.2	100.8	102.9	103.0	100.9	103.9	104.5	103.5	105.4
նախորդ ամսվա նկատմամբ	99.1	102.8	99.9	100.3	98.6	102.1	100.1	98.0	103.0	100.6	99.0	101.9
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ	102.4	103.2	99.6	95.4	94.7	96.3	99.3	96.8	102.2	102.0	100.6	105.4

ԼՂՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2011-2012թթ. հունվար-դեկտեմբերին

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



2012թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ սպառողական շուկայում արձանագրված 1.6 տոկոս գնաճին զուգընթաց արտարժույթի շուկայում դիտվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.3 տոկոս նվազում: 2012թ. դեկտեմբերին 2011թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 3.0 տոկոս գնաճի պայմաններում գրանցվել է հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 5.9 տոկոս աճ՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նույնամուտ ցուցանիշների՝ 4.0 տոկոս սպառողական գնաճի և հաշվարկային փոխարժեքի 6.3 տոկոս աճի դիմաց:

2012թ. հունվար-դեկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի ամենաբարձր մակարդակը գրանցվել է հուլիս ամսին (414.6 դրամ), իսկ ամենացածրը՝ հունվարին (387.5 դրամ): 2011թ. հունվար-դեկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի ամենաբարձր մակարդակը գրանցվել է դեկտեմբեր ամսին (383.1 դրամ), իսկ ամենացածրը՝ հունվարին (365.0 դրամ):

Գների փոփոխությունները 2012թ. I-IV եռամսյակներում, ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ	
	նախորդ եռամսյակի նկատմամբ	նախորդ տարվա համապատասխան եռամսյակի նկատմամբ	նախորդ եռամսյակի նկատմամբ	նախորդ տարվա համապատասխան եռամսյակի նկատմամբ	նախորդ եռամսյակի նկատմամբ	նախորդ տարվա համապատասխան եռամսյակի նկատմամբ	նախորդ եռամսյակի նկատմամբ	նախորդ տարվա համապատասխան եռամսյակի նկատմամբ
Սպառողական գների ինդեքս	103.6	102.4	99.4	100.5	98.2	102.1	102.0	103.2
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս	99.3	84.7	101.4	86.8	91.2	79.1	115.0	105.6
Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս	97.7	99.4	96.4	97.5	103.5	105.2	105.8	108.3
Արտահանման միջին գների (միջին արժեքի) ինդեքս	100.6	101.4	95.3	92.9	104.7	100.1	98.7	99.1
Ներմուծման միջին գների (միջին արժեքի) ինդեքս	106.0	108.8	100.8	109.0	99.9	107.6	102.1	109.0


ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐ:

Սպառողական գների փոփոխությունները 2012թ. դեկտեմբերին

(%)

	2012թ. դեկտեմբերը			հունվար-դեկտեմբերը 2011թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
	2012թ. նոյեմբերի նկատմամբ	2011թ. դեկտեմբերի նկատմամբ	2010թ. նկատմամբ	
Սպառողական գների ինդեքս	101.6	103.0	117.6	102.0
այդ թվում՝				
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	102.9	101.8	119.3	100.2
ոչ պարենային ապրանքների ծառայությունների	100.4	105.8	117.5	105.2
	100.0	103.6	114.7	103.8

Սպառողական գների հավելանքը 2003-2012թթ. դեկտեմբերին (նախորդ տարվա դեկտեմբերը =100.0)



Սպառողական գների ինդեքսները

(դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)

	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Սպառողական գների ինդեքս, ընդամենը	105.1	110.6	104.0	103.0
պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	100.1	115.2	103.7	101.8
պարենային ապրանքներ	99.7	116.4	103.9	101.9
ոգելից խմիչք և ծխախոտ	103.9	104.2	101.4	101.6
ոչ պարենային ապրանքներ	112.8	103.8	107.8	105.8
ծառայություններ	111.3	106.5	103.3	103.6

Սպառողական գների ինդեքսը 2011-2012թթ.

	Ընդամենը		այդ թվում՝					
	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)		Ոչ պարենային ապրանքներ		Բնակչությանը մատուցված ծառայություններ	
			նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2011թ.								
Հունվար	102.4	102.4	104.3	104.3	102.2	102.2	99.6	99.6
Փետրվար	101.1	103.5	101.4	105.8	100.9	103.1	100.6	100.2
Մարտ	101.0	104.6	101.5	107.4	100.5	103.7	100.3	100.5
I եռամսյակ	104.6*	x	107.4*	x	103.7*	x	100.5*	x
Ապրիլ	100.9	105.5	99.9	107.3	100.7	104.4	102.9	103.5
Մայիս	100.0	105.5	99.5	106.8	101.2	105.7	100.2	103.7
Հունիս	98.2	103.6	96.6	103.2	100.4	106.1	100.2	103.8
II եռամսյակ	99.0*	x	96.1*	x	102.3*	x	103.3*	x
Հուլիս	98.0	101.5	96.8	99.9	100.2	106.3	99.0	102.8
Օգոստոս	100.0	101.5	99.4	99.3	100.2	106.5	100.9	103.7
Սեպտեմբեր	99.7	101.2	99.8	99.1	100.1	106.6	99.3	103.0
III եռամսյակ	97.7*	x	96.0*	x	100.5*	x	99.2*	x
Հոկտեմբեր	99.7	100.9	99.9	99.0	99.9	106.6	99.4	102.3
Նոյեմբեր	101.1	102.1	101.4	100.4	100.3	106.9	101.0	103.4
Դեկտեմբեր	101.9	104.0	103.2	103.7	100.8	107.8	100.0	103.3
IV եռամսյակ	102.8*	x	104.6*	x	101.1*	x	100.3*	x
2012թ.								
Հունվար	102.0	102.0	103.2	103.2	100.5	100.5	100.4	100.4
Փետրվար	99.7	101.7	99.3	102.6	100.1	100.6	100.2	100.6
Մարտ	100.5	102.2	99.5	102.0	100.7	101.3	102.3	102.9
I եռամսյակ	102.2*	x	102.0*	x	101.3*	x	102.9*	x
Ապրիլ	99.6	101.8	99.0	101.0	101.2	102.4	100.1	102.9
Մայիս	99.7	101.5	99.4	100.5	100.1	102.6	100.0	103.0
Հունիս	99.2	100.8	98.5	99.0	100.1	102.7	100.1	103.1
II եռամսյակ	98.6*	x	97.1*	x	101.4*	x	100.2*	x
Հուլիս	99.0	99.8	98.2	97.2	100.0	102.8	100.0	103.1
Օգոստոս	99.5	99.3	98.5	95.7	100.1	102.9	101.1	104.2
Սեպտեմբեր	100.3	99.6	100.1	95.8	101.4	104.3	100.1	104.4
III եռամսյակ	98.8*	x	96.8*	x	101.6*	x	101.3*	x
Հոկտեմբեր	100.7	100.3	101.7	97.4	100.6	104.9	99.0	103.4
Նոյեմբեր	101.1	101.4	101.7	99.0	100.5	105.4	100.2	103.6
Դեկտեմբեր	101.6	103.0	102.9	101.8	100.4	105.8	100.0	103.6
IV եռամսյակ	103.4*	x	106.3*	x	101.4*	x	99.2*	x

**) Եռամսյակի վերջին ամիսը՝ նախորդ եռամսյակի վերջին ամսվա նկատմամբ (նախորդ տարվա դեկտեմբերը=100.0)*

2012թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 101.6 տոկոս, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 102.9 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 100.4 և ծառայությունների սակագներինը՝ 100.0 տոկոս:

2012թ. դեկտեմբերին 2011թ. դեկտեմբերի համեմատ պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 101.8 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 105.8, իսկ վճարովի ծառայությունների սակագներինը՝ 103.6 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 103.7, 107.8, 103.3 տոկոսի փոխարեն:

2012թ. սպառողական գների միջին ամսական հավելվածը կազմել է 0.2 տոկոս, 2011թ.՝ 0.3 տոկոս:

Գների միջին ամսական փոփոխությունները 2011-2012թթ.


(տոկոսներով)

	2011թ.	2012թ.
Սպառողական գների ինդեքս	0.3	0.2
<i>այդ թվում՝</i>		
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	0.3	0.2
ոչ պարենային ապրանքների	0.6	0.5
ծառայությունների	0.3	0.3
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս	-0.8	1.5
Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս	-2.1	1.6

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2012թ. հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 102.0 տոկոս, այդ թվում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 100.2 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 105.2, ծառայությունների սակագներինը՝ 103.8 տոկոս:

ԼՂՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2012թ. հունվար-դեկտեմբերին, տոկոսներով (նախորդ տարվա դեկտեմբերը=100.0)




ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ: Պարենային ապրանքների շուկայում (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 2012թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ գրանցվել է 2.9 տոկոս գնաճ:


Պարենային ապրանքների ընդհանուր գնաճը չորրորդ եռամսյակում կազմել է 2.1 տոկոս, այդ թվում հոկտեմբերին և նոյեմբերին՝ 1.7 տոկոս, իսկ դեկտեմբերին՝ 2.9 տոկոս: Դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ գնաճի համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է հետազոտվող պարենային ապրանքախմբերից բանջարեղեն և կարտոֆիլ (26.4 տոկոս), միրգ (6.5 տոկոս), կաթնամթերք (2.6 տոկոս) և ձու (2.0 տոկոս) ապրանքախմբերում:

Միրգ, բանջարեղեն և կարտոֆիլ ապրանքախմբում նախորդ ամսվա համեմատ ինֆլյացիա է արձանագրվել դիտարկվող բոլոր 7 քաղաքներում:


Հացամթերքի, այդ թվում հացի և ալյուրի գների փոփոխությունները 2011-2012 թթ. (2010թ. նկատմամբ, %)



Բանջարեղեն և կարտոֆիլ ապրանքախմբի գների ինդեքսը 2010-2012թթ. ըստ ամիսների (նախորդ ամիսը=100.0)



Միրգ ապրանքախմբի գների ինդեքսը 2010-2012 թվականներին ըստ ամիսների
(նախորդ ամիսը=100.0)



Առանձին պարենային ապրանքախմբերի գների փոփոխությունները

/տոկոսներով/

	2012թ.					2012թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ	2012թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ	2012թ. դեկտեմբերը 2010թ. նկատմամբ
	հունվարը	մարտը	հունիսը	սեպտեմբերը	դեկտեմբերը			
	2011թ. դեկտեմբերի նկատմամբ							
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	103.2	102.0	99.0	95.8	101.8	102.9	100.2	119.3
Պարենային ապրանքներ	103.5	102.1	98.8	95.3	101.9	103.1	100.1	120.7
հացամթերք	99.2	97.4	96.5	97.4	101.4	101.2	96.7	123.5
մսամթերք	101.5	103.6	105.9	106.6	106.2	99.5	108.6	135.5
ձկնամթերք	100.2	100.0	99.0	98.4	98.4	102.0	100.6	110.8
կաթնամթերք	101.1	101.3	89.5	89.4	102.3	102.6	99.7	123.5
ձու	97.3	83.4	72.9	78.8	91.1	101.1	91.9	115.0
կենդանական և բուսական յուղ	102.8	100.3	98.3	99.3	103.4	100.2	104.6	132.1
միրգ	106.7	107.4	123.1	88.1	99.4	106.5	78.9	91.0
բանջարեղեն և կարտոֆիլ	124.1	115.9	88.9	69.0	97.9	126.4	92.2	99.1
շաքարավազ	99.7	97.6	95.9	95.7	93.9	98.5	110.8	138.5
սուրճ, թեյ, կակաո	100.5	100.7	100.2	101.6	102.2	100.2	110.9	131.5
հրուշակեղեն	100.8	101.9	101.2	101.7	103.7	100.7	106.1	116.3
ոչ ոգելից խմիչք	100.0	99.8	102.8	103.8	103.8	99.9	102.3	104.6
ոգելից խմիչք և ծխախոտ	100.4	101.1	101.3	101.2	101.6	100.2	101.9	105.8

Մի խումբ պարենային ապրանքների գների համեմատությունը տավարի մսի գնի նկատմամբ

/տոկոսներով/

	2011թ.				2012թ.			
	մարտ	հունիս	սեպտեմբեր	դեկտեմբեր	մարտ	հունիս	սեպտեմբեր	դեկտեմբեր
Միս տավարի	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Կաթ	11.2	10.6	10.6	10.9	10.5	10.2	10.0	10.5
Պանիր (տեղական)	73.6	52.5	62.1	68.1	65.8	48.4	48.4	62.4
Բուսական յուղ	38.7	38.9	38.8	38.6	35.2	32.5	33.9	37.9
Չու (տասնյակ)	30.6	25.9	26.7	31.1	24.4	20.7	22.4	26.3
Հաց	16.4	16.7	16.7	16.6	15.3	14.8	14.8	15.1
Մակարոն, վերմիշել	19.0	18.8	18.7	18.3	16.5	16.0	16.5	18.1
Շաքարավազ	17.4	18.3	22.1	21.9	20.1	19.2	19.2	19.1
Բրինձ	26.3	25.5	25.2	25.1	24.5	22.7	22.9	23.4
Աղ	7.4	7.3	7.3	7.4	7.0	6.8	6.8	7.3
Կարտոֆիլ	15.3	16.2	11.4	10.9	11.5	11.6	8.7	7.7
Խնձոր	47.3	37.3	19.7	20.3	19.8	26.1	13.6	16.6
Թեյ	215.3	214.4	213.9	213.6	201.5	195.5	204.5	208.1
Սուրճ	110.5	125.1	130.3	133.7	126.8	122.3	123.7	125.1

Կատարված հաշվարկների արդյունքներով 2012թ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ սուրճի, պանրի, ձվի, խնձորի, կարտոֆիլի, շաքարավազի, բրնձի, հացի, բուսական յուղի, թեյի, թարմ

կաթի, մակարոնի, վերմիշելի, աղի գները տավարի մսի գնի նկատմամբ նվազել են 8.6-0.2 տոկոսային կետերով:

Պարենային մի խումբ ապրանքատեսակների միջին հանրապետական գները 2011-2012թթ.

/դրամով/

	չափի միավորը	2011թ.				2012թ.			
		մարտ	հունիս	սեպտեմբեր	դեկտեմբեր	մարտ	հունիս	սեպտեմբեր	դեկտեմբեր
Միս տավարի	կգ	2285.4	2308.3	2312.9	2325.6	2467.8	2545.5	2542.5	2505.4
Միս խոզի	կգ	2613.4	2613.4	3279.4	3326.0	3614.0	3662.4	3650.1	3556.4
Թարմ կաթ	լ	255.3	244.6	244.8	252.7	258.9	259.9	254.1	261.9
Պանիր	կգ	1681.9	1212.1	1436.1	1584.4	1624.1	1232.0	1230.5	1562.2
Բուսական յուղ	լ տասնյակ	884.6	897.5	896.3	897.9	868.9	827.7	863.0	948.3
Չու		700.1	597.6	618.1	722.7	602.4	527.8	568.8	658.6
Հաց	կգ	375.2	386.4	386.4	386.4	377.5	376.5	376.7	379.1
Մակարոն, վերմիշել	կգ	434.7	433.3	432.1	425.3	407.9	408.1	419.4	453.4
Շաքարավազ	կգ	397.5	422.3	510.8	509.3	497.2	488.3	487.7	478.4
Բրինձ	կգ	601.8	588.6	582.7	583.5	604.3	577.9	583.4	586.1
Կարտոֆիլ	կգ	350.5	374.7	262.7	254.6	284.6	294.2	220.2	192.2
Թարմ կաղամբ	կգ	263.3	209.4	133.2	141.4	148.7	160.8	163.3	232.8
Գլուխ սոխ	կգ	522.1	330.8	305.2	302.6	306.3	346.5	311.0	314.0
Գազար	կգ	492.6	584.3	288.9	258.1	310.2	558.5	364.4	334.5
Խնձոր	կգ	1080.7	861.0	455.7	471.7	489.1	664.3	346.2	416.8
Թեյ	կգ	4919.7	4948.1	4948.1	4966.6	4973.1	4977.4	5200.4	5212.7
Սուրճ	կգ	2525.5	2888.8	3013.1	3109.9	3130.1	3114.4	3144.9	3134.2

ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ: 2012թ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 5.8 տոկոս գնաճ: Առավել բարձր գնաճեր են արձանագրվել ոսկերչական ապրանքներ, լվացող միջոցներ, տեքստիլեղեն, գորգեղեն, անձնական օգտագործման ապրանքներ և բենզին, դեղամիջոցներ, վառելիք, հագուստ և գործվածք, խոհանոցային սպասք, կոշիկեղեն, կենցաղային էլեկտրաապրանքներ, գեղահարդարման ապրանքներ, գրենական պիտույքներ ապրանքախմբերում:


Ոչ պարենային ապրանքների շուկայում 2012թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ գներն աճել են 0.4 տոկոսով՝ հիմնականում պայմանավորված գորգեղեն (2.7 տոկոս), տեքստիլեղեն (1.7 տոկոս), վառելիք (1.2 տոկոս), հագուստ և գործվածք (1.0 տոկոս) ապրանքախմբերում արձանագրված գնաճերով:

Բենզինի և դիզելային վառելիքի գների փոփոխությունը 2012թ.

/տոկոսներով/

	2012թ.												դեկտեմբերը		հունվար-դեկտեմբերը 2011թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
	հունվարը	փետրվարը	մարտը	ապրիլը	մայիսը	հունիսը	հուլիսը	օգոստոսը	սեպտեմբերը	հոկտեմբերը	նոյեմբերը	դեկտեմբերը	2011թ. դեկտեմբերի նկատմամբ	2010թ. նկատմամբ	
	նախորդ ամսվա նկատմամբ														
Բենզին	100.0	101.7	103.3	105.9	100.7	98.0	98.9	99.2	104.0	100.2	99.4	99.4	110.8	131.0	111.4
Դիզելային վառելիք	100.0	100.7	101.5	102.0	100.0	99.1	98.5	99.5	104.4	100.0	100.1	99.9	105.7	141.6	108.4

Բենզինի և դիզելային վառելիքի գների փոփոխությունը 2011-2012թթ. ըստ ամիսների (2010թ. նկատմամբ, %)



Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունը

/տոկոսներով/

	2012թ.					դեկտեմբեր 2012թ. նոյեմբերի նկատմամբ	2012թ. հունվար դեկտեմբեր 2011թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ	2012թ. դեկտեմբեր 2010թ. նկատմամբ
	հունվար	մարտ	հունիս	սեպտեմբեր	դեկտեմբեր			
	2011թ. դեկտեմբերի նկատմամբ							
Ոչ պարենային ապրանքներ <i>այդ թվում՝</i>	100.5	101.3	102.7	104.3	105.8	100.4	105.2	117.5
հագուստ և գործվածք	101.0	101.5	102.1	102.8	105.0	101.0	103.8	114.0
կոշիկեղեն	100.5	101.2	102.6	103.2	104.6	100.5	103.8	113.3
վառելիք	99.8	99.4	98.3	101.8	105.4	101.2	101.1	110.1
կահույք	99.9	99.9	100.1	100.9	103.6	100.8	101.9	111.3
գորգեղեն	100.0	100.0	100.0	103.3	109.0	102.7	103.6	122.3
տեքստիլեղեն	100.0	100.9	103.0	104.5	109.0	101.7	107.1	123.5
կենցաղային էլեկտրաապրանքներ	100.3	100.5	100.9	101.8	102.6	99.9	103.8	113.6
խոհանոցային ապար	100.0	100.6	101.4	101.3	104.8	100.6	103.5	123.1
լվացող միջոցներ	100.5	100.9	101.1	107.4	109.5	100.1	104.6	120.1
շինանյութեր	100.0	100.0	100.2	101.6	101.6	100.0	102.2	109.0
դեղամիջոցներ	100.0	99.9	103.1	103.7	106.3	100.5	108.2	122.1
անձնական օգտագործման մեքենաներ և բեմզին	100.1	103.8	107.2	108.9	108.1	99.6	108.8	128.5
մշակույթի ապրանքներ	102.2	98.8	94.9	94.9	95.8	101.0	102.2	108.0
գրենական պիտույքներ	100.8	101.0	101.2	103.1	104.2	100.0	103.9	117.3
գեղահարդարման ապրանքներ	100.9	100.8	102.5	103.1	104.3	100.0	103.2	108.3
ոսկերչական ապրանքներ	100.3	104.0	108.1	108.5	109.5	100.8	122.6	164.2
անձնապիտո ապրանքներ	101.2	100.5	101.0	102.7	103.1	99.7	103.2	109.9


ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Հաշվետու տարվա դեկտեմբերին 2012թ. դեկտեմբերի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 3.6 տոկոս աճ՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 3.3 տոկոսի փոխարեն: Գնաճը հիմնականում պայմանավորված է մշակույթի ոլորտի, կենցաղային, բնակարանային-կոմունալ, կրթության համակարգի, հանրային սննդի, հանգստի և բուժապասարկման ծառայությունների սակագների 0.6-17.1 տոկոս գնաճով: 2012թ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ նվազել են տրանսպորտի(0.7 տոկոս) ծառայությունների սակագները, իսկ կապի և իրավական և բանկային ոլորտի ծառայությունների սակագները մնացել են անփոփոխ:

2012թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ ծառայությունների սակագները մնացել են անփոփոխ: 2012թ. հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը կազմել է 103.8 տոկոս:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

	2012թ.					դեկտեմբեր 2012թ. նոյեմբերի նկատմամբ	2012թ. հունվար-դեկտեմբեր 2011թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ	2012թ. դեկտեմբեր 2010թ. նկատմամբ
	հունվար	մարտ	հունիս	սեպտեմբեր	դեկտեմբեր			
	2011թ. դեկտեմբերի նկատմամբ							
Ծառայություններ, ընդամենը <i>այդ թվում՝</i>	100.4	102.9	103.1	104.4	103.6	100.0	103.8	114.7
կենցաղային բնակարանային-կոմունալ	100.7	100.8	100.8	100.9	100.9	100.0	101.0	101.4
բուժապասարկման տրանսպորտի	101.2	117.1	117.1	117.1	117.1	100.0	119.6	152.2
կապի	98.8	98.6	98.9	109.0	99.3	100.1	108.2	109.1
մշակույթի	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	91.0	74.6
կրթության	100.0	100.5	100.6	100.6	100.6	100.0	97.4	95.0
հանգստի	100.2	100.2	100.2	104.0	104.0	100.0	104.4	124.2
հանրային սննդի	104.6	104.6	107.0	108.2	113.9	100.0	107.1	108.4
իրավական և բանկային	101.1	101.1	102.6	102.6	105.5	100.0	107.7	121.3
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	101.2	116.5

Ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները 2012թ. դեկտեմբերին



ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Սպառողական գների ինդեքսը 2009-2012թթ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, ըստ դիտարկվող քաղաքների

	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ. (%)
ԼՂՀ, ընդամենը	105.1	110.6	104.0	103.0
այդ թվում՝				
Ստեփանակերտ	106.1	109.0	104.0	103.6
Ասկերան	102.6	115.4	104.8	102.4
Հաղրուք	103.3	110.2	103.5	103.9
Մարտակերտ	104.9	111.8	102.8	102.1
Մարտունի	105.3	113.6	104.9	100.9
Շուշի	102.1	108.5	104.5	103.3
Բերձոր	105.6	112.9	101.9	102.4

2012թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ հանրապետությունում դիտարկվող բոլոր 7 քաղաքներում արձանագրվել է սպառողական գների 0.9-2.0 տոկոս աճ: Գնաճի համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Բերձորում, Ասկերանում, Շուշիում, Ստեփանակերտում, իսկ ամենացածրը՝ Հաղրուքում:


Պարենային ապրանքների շուկայում (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) դեկտեմբեր ամսին նախորդ ամսվա համեմատ դիտարկվող բոլոր քաղաքներում արձանագրվել է 1.6-3.7 տոկոս գնաճ, գնաճի համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Ասկերանում, Բերձորում, Շուշիում և Ստեփանակերտում:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2012թ. դեկտեմբերին 2010թ-ի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի

	Սպառողական գների ինդեքս	այդ թվում՝ դրանցից՝				բնակչությանը մատուցված ծառայությունների
		սպառման ապրանքների	պարենային ապրանքների /ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ/	որից՝		
				պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
Ընդամենը ԼՂՀ-ում	117.6	118.9	119.3	120.7	117.5	114.7
այդ թվում՝						
Ստեփանակերտ	117.2	118.7	119.3	120.8	116.5	113.7
Ասկերան	122.2	122.1	121.6	123.4	123.9	122.3
Հաղրուք	114.7	113.9	114.8	115.6	110.8	116.3
Մարտակերտ	117.1	119.0	118.3	118.9	121.5	112.9
Մարտունի	118.2	119.3	119.9	121.5	116.9	115.7
Շուշի	118.8	121.7	123.2	125.2	116.8	112.1
Բերձոր	116.3	118.4	117.6	119.1	121.2	111.5

Սպառողական գների ինդեքսը 2012թ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, ըստ դիտարկվող քաղաքների

(2011թ. դեկտեմբերի նկատմամբ, %)



Որոշ ոչ պարենային ապրանքախմբերի գների փոփոխություններն ըստ դիտարկվող քաղաքների, 2012թ. դեկտեմբերին

(2011թ. դեկտեմբերի նկատմամբ, %)

	Հազուստ և գործվածք	կոշիկեղեն	վառելիք	դեղամիջոցներ	կենցաղային էլեկտրաապրանքներ	մշակույթի ապրանքներ	գրենական պիտույքներ	գեղահարդարման ապրանքներ
2012թ.								
Լ.Ղ.Հ. ընդամենը այդ թվում՝	105.0	104.6	105.4	106.3	102.6	95.8	104.2	104.3
Ստեփանակերտ	104.6	103.1	104.8	106.9	104.0	93.0	104.8	104.1
Ասկերան	112.6	111.2	139.6	99.1	99.3	98.3	106.5	106.9
Հաղրուք	101.6	101.8	100.0	100.0	100.3	100.1	106.1	103.1
Մարտակերտ	101.6	107.2	98.5	100.9	99.1	98.9	104.5	108.8
Մարտունի	102.5	104.5	100.0	113.7	103.5	100.1	100.0	102.6
Շուշի	100.8	102.2	97.2	117.3	101.3	96.7	100.0	101.0
Բերձոր	115.7	109.8	100.0	107.0	98.2	99.9	100.0	99.8

Հանրապետությունում, ըստ հետազոտված բնակավայրերի, կարևորագույն պարենային ապրանքների միջին գները՝ 2011թ. դեկտեմբերի 30-ի և 2012թ. դեկտեմբերի 28-ի դրությամբ

/դրամ՝ կգ-ի համար/

	միս տավարի	պանիր	կարագ	բուսական յուղ, լիտր	ձու, տասնյակ	շաքարավազ	կարտոֆիլ	գլուխ սոխ	կաղամբ	խնձոր
2011թ.										
Լ.Ղ.Հ. ընդամենը այդ թվում՝	2 336.0	1 612.7	3 810.0	900.7	710.8	508.2	257.4	307.1	132.4	442.7
Ստեփանակերտ	2300.0	1550.0	3892.9	891.4	704.0	504.2	250.0	293.3	125.0	375.0
Ասկերան	2300.0	1766.6	3675.0	936.0	740.0	522.5	250.0	316.6	142.5	490.0
Հաղրուք	2400.0	1500.0	4000.0	950.0	800.0	550.0	250.0	350.0	150.0	500.0
Մարտակերտ	2350.0	2100.0	3600.0	890.0	700.0	500.0	262.5	300.0	125.0	487.5
Մարտունի	2500.0	1500.0	3567.0	900.0	700.0	500.0	300.0	350.0	150.0	650.0
Շուշի	2300.0	1500.0	4000.0	900.0	650.0	520.0	250.0	300.0	130.0	500.0
Բերձոր	2300.0	1600.0	3750.0	900.0	700.0	500.0	250.0	300.0	150.0	400.0
2012թ.										
Լ.Ղ.Հ. ընդամենը այդ թվում՝	2440.7	1665.3	3675.3	941.1	680.8	468.5	193.9	323.5	261.9	437.5
Ստեփանակերտ	2500.0	1750.0	3621.4	940.7	703.0	461.4	183.3	300.0	250.0	450.0
Ասկերան	2500.0	1800.0	3720.0	950.0	680.0	455.0	182.5	333.3	266.6	400.0
Հաղրուք	2500.0	1500.0	4000.0	950.0	700.0	550.0	250.0	350.0	300.0	450.0
Մարտակերտ	2300.0	1675.0	3875.0	950.0	650.0	480.0	216.7	416.7	300.0	425.0
Մարտունի	2300.0	1300.0	3600.0	920.0	600.0	430.0	200.0	350.0	300.0	400.0
Շուշի	2500.0	1604.2	3750.0	950.0	700.0	480.0	200.0	300.0	190.0	400.0
Բերձոր	2100.0	1600.0	3500.0	950.0	650.0	550.0	200.0	300.0	200.0	500.0

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1 կգ-ի, ձվի՝ տասնյակի հաշվարկով) 2012թ. դեկտեմբերի 28-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 11088.5 դրամ, ինչը 0.6 տոկոսով գերազանցում է նույնամյան ապրանքատեսակների նախորդ տարվա դեկտեմբերի 30-ին


արձանագրված ընդհանուր արժեքից (11018.0 դրամ): Գիտարկված քաղաքներում վերոհիշյալ ապրանքների ձեռքբերման ամենացածր արժեքն արձանագրվել է Մարտունիում (10400.0 դրամ), իսկ ամենաբարձրը՝ Հաղրուբում (11550.0 դրամ):

Գիտարկված բոլոր քաղաքներում, բացառությամբ Մարտակերտից և Մարտունուց, 2012թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.1-0.7 տոկոսով: Աճի ամենաբարձր միտում արձանագրվել է Ասկերան և Բերձոր քաղաքներում: Մարտակերտ և Մարտունի քաղաքներում ոչ պարենային ապրանքների գները 2012թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2012թ. դեկտեմբերին հետազոտված բոլոր քաղաքներում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ԳՆԵՐԻ ԻՆՂԵՔՍ: 2012թ. դեկտեմբերին 2012թ. նոյեմբերի նկատմամբ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 102.0 տոկոս, իսկ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նշված ցուցանիշը կազմել է 94.9 տոկոս:

ԼՂՀ սպառողական գների ինդեքսի և արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի փոփոխությունները 2011-2012թթ. հունվար-դեկտեմբերին՝ ըստ ամիսների տոկոսներով (նախորդ ամիսը =100.0)



2012թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի 2.0 տոկոս գների աճը հիմնականում պայմանավորված է թեթև և հանքաքարային արդյունաբերության թողարկած արտադրանքի գների համապատասխանաբար 5.2 և 4.5 տոկոս գնաճերով:

2012թ. հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա հունվար-դեկտեմբերի համեմատ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գները նվազել են 11.5 տոկոսով, որը հիմնականում պայմանավորված է թեթև և հանքաքարային արդյունաբերության թողարկած արտադրանքի գների նվազմամբ:

	2012թ. դեկտեմբերը 2012թ. նոյեմբերի նկատմամբ	2012թ. հունվար-դեկտեմբերը 2011թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ	2012թ. դեկտեմբերը 2011թ. դեկտեմբերի նկատմամբ
Անբողջ արդյունաբերությունը այդ թվում՝	102.0	88.5	109.2
Էլեկտրաէներգիայի, ջրի արտադրություն և բաշխում	100.3	99.6	99.4
Հանքագործական արդյունաբերություն	104.5	75.0	120.7
Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն	100.0	100.0	100.0
Հրատարակչական գործերի արտադրություն	100.0	101.3	100.0
Անտառային, փայտամշակման և թղթի-ցելյուլոզի արդյունաբերություն	101.4	139.4	144.7
Շինանյութերի արդյունաբերություն	94.3	101.7	107.4
Թեթև արդյունաբերություն	105.2	64.6	58.6
Սննդի արդյունաբերություն	101.2	102.0	110.8

ԳՅՈՒԿԱՍՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԻՐԱՅՄԱՆ ԳՆԵՐԻ ԻՆՂԵՔՍ: 2012թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 106.9 տոկոս:

2012թ. դեկտեմբերին 2011թ. դեկտեմբերի համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 117.6 տոկոս, որը հիմնականում միս (20.9 տոկոս) ապրանքատեսակի իրացման գնաճի արդյունք է:

2012թ. հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 100.5 տոկոս (այդ թվում՝ բուսաբուծականը՝ 93.7, անասնապահականը՝ 110.4 տոկոս)՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 104.2 տոկոսի դիմաց:

Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը ԼՂՀ-ում ըստ շրջանների 2012թ. հունվար-դեկտեմբերին

/տոկոս/

	2012թ. դեկտեմբերը		2012թ. հունվար-դեկտեմբերը 2011թ. հունվար- դեկտեմբերի նկատմամբ
	2012թ. նոյեմբերի նկատմամբ	2011թ. դեկտեմբերի նկատմամբ	
Ընդամենը ԼՂՀ-ում	106.9	117.6	100.5
այդ թվում՝			
Ստեփանակերտ	105.0	110.6	104.0
Ասկերան	106.3	119.0	95.4
Հաղրուք	109.5	119.1	98.6
Մարտակերտ	103.6	116.6	101.0
Մարտունի	107.5	117.4	103.5
Շահումյան	104.4	120.7	95.8
Շուշի	104.6	116.4	99.2
Քաշաթաղ	109.4	116.2	106.9

2012թ. դեկտեմբեր ամսվա գյուղատնտեսական մթերքների իրացման միջին գները ըստ շրջանների

/դրամ/

Մթերքների անվանումը	Չափման միավորը	Ստեփանակերտ	Ասկերան	Հաղրուք	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ
միս (կենդանի քաշով)	կգ	1492.00	1475.00	1488.00	1458.00	1460.00	1408.00	1478.0	1400.0
կաթ	լ	220.00	210.00	210.00	200.00	210.00	200.00	200.0	200.0
ձու	տասնյակ	650.0	650.0	620.0	650.0	650.0	650.0	650.0	580.0

Գյուղմթերքների իրացման գների ինդեքսը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2012թ. (դեկտեմբեր 2011=100.0)

